ՀԻՄՆԱՐԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ ՀՀ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԻՋԵՎ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՇԱԳԻՐ

Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամը և ՀՀ Գիտության պետական կոմիտեն (այսուհետ՝ Կողմեր), առաջնորդվելով հարաբերությունների ամրապնդման և երկու երկրների ժողովուրդների միջև եղած ավանդական բարեկամական կապերի զարգացման փոխադարձ ցանկությամբ և ելնելով Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության գիտության զարգացման շահերից, կնքեցին ներկայիս համաձայնությունը (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալ դրույթների վերաբերյալ:

Հոդված 1

Ներկայիս Հուշագրի առարկան և նպատակը Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության գիտական աշխատակազմերի և հետազոտողների միջև համագործակցության զարգացմանը նպաստելն է՝ երկու կողմերի համար հետաքրքրություն ներկայացնող համատեղ հիմնարար գիտական հետազոտությունների անցկացմանը աջակցելու նպատակով:

Հոդված 2

2.1 Հուշագրի շրջանակներում Կողմերը իրականացնում են համատեղ մրցույթների անցկացման տեսքով համագործակցության ծրագիր:

- Նախաձեռնական գիտահետազոտական նախագծեր, որոնք իրագործվում են Ռուսաստանի և Հայաստանի գիտնականների աշխատողների համատեղ գործունեությամբ:

- Հայ-ռուսական համատեղ գիտական միջոցառումների /սեմինարներ, գիտաժողովներ, համագումարներ/ կազմակերպման նախագծեր, որոնք համապատասխանաբար կանցկացվեն ընդունված նախագծերի ֆինանսավորման երաշխիքով ՌԴ և ՀՀ տարածքներում:

Գիտական ուղղությունները, համաձայն որոնց անցկացվում են մրցույթները, նրանց դիրքորոշումները, վերջիններիս անցկացման ժամկետներն ու պայմանները, ինչպես նաև ֆինանսավորման ծավալներն ու հերթականությունը կանխորոշվում են համապատասխան մրցույթի հայտարարումից ոչ ուշ, քան 3 ամիս առաջ ներկայիս Հուշագրին կցված լրացուցիչ համաձայնագրերով:

2.2 Կողմերի համաձայնությամբ հիմնարար գիտության բնագավառում կարող են կիրառվել համագործակցության նաև այլ ձևեր:

2.3 Կողմերից յուրաքանչյուրը հիմնարար գիտությունների բնագավառում իրավունք ունի Ռուսաստանի և Հայաստանի գիտնականների միջև ցուցաբերել գիտական համագործակցության աջակցություն:

Հոդված 3

Կողմերը միմյանց աջակցում են գիտական նյութերի և գրականության փոխանակման հարցում, այդ թվում նաև նյութերի, որոնք հրատարակվել են

համատեղ հետազոտությունների շնորհիվ, ընդ որում փոխանակումը իրականացվում է համաձայն երկու երկրներում գործող օրենքների:

Հոդված 4

Կողմերը միմյանց աջակցում են գիտական նախագծերի փորձաքննության անցկացման և առաջատար ռուս և հայ գիտնականների, որպես փորձագետների, ներգրավման հարցում:

Հոդված 5

5.1 Համաձայն ներկայիս Հուշագրի՝ կոնկրետ գործունեության իրականացման ընթացքում ստացված տեղեկատվությունն ու արդյունքները տարածվում են համաշխարհային գիտական հանրությունում սովորական տեղեկատվական միջոցների շնորհիվ՝ համաձայն ընդունված կարգի:

5.2 Կողմերը հաշվի առնելով միջազգային իրավունքի նորմերը և համագործակցող երկրների գործող օրենսդրությունը պարտավորվում են ձեռնամուխ լինել լուծելու մտավոր սեփականության պաշտպանությանը վերաբերող հարցերը, որոնք կարող են ծագել համատեղ նախագծեր իրականացնելու գործընթացում:

Հոդված 6

Ներկայիս Հուշագրի իրականացման հետ կապված տեղեկատվությունը Կողմերը կարող են հրատարակել իրենց պարբերական հրատարակություններում:

Հոդված 7

7.1 Համատեղ գործունեությունը՝ համաձայն ներկայիս Հուշագրի, իրականացվում է միջազգային պարտավորությունների և երկու Կողմերի երկրների օրենսդրությանը համապատասխան:

7.2 Հուշագրի յուրացման հետ կապված հարցերը լուծվում են նամակագրության միջոցով կամ Կողմերի ներկայացուցիչների հանդիպման ժամանակ:

Հոդված 8

8.1 Երկկողմանի համաձայնությամբ գրավոր փաստաթղթերի պարտադիր ներկայացման պարագայում Համաձայնագրի պայմանները կարող են ենթարկվել փոփոխության կամ լրացման:

8.2 Փոփոխությունները և լրացումները ձևակերպվում են լրացուցիչ համաձայնագրերով, որոնք ուժի մեջ են մտնում սույն փաստաթղթի ստորագրման պահից:

Հոդված 9

9.1 Սույն Հուշագրի գործունեության ժամկետը կազմում է 5 տարի և ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Եթե Հուշագրի գործունեության ժամկետի ավարտից 6 ամսվա ընթացքում Կողմերից և ոչ մեկը չի ներկայացնում գրավոր պահանջ Հուշագրի գործունեության

կասեցման վերաբերյալ, ապա վերջինիս ժամկետը ինքնաբերաբար երկարացվում է ևս 5 տարով:

9.2 Կողմերը իրենց իրավունք են վերապահում ներկայիս Հուշագիրը վաղաժամ ընդհատել:

Այս դեպքում Կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է այդ մասին տեղյակ պահել մյուս կողմին՝ Հուշագրի կասեցման պահից 6 ամիս առաջ:

Կողմերի փոխհամագործակցությունը ընդհատվում է առանձին հուշագրի կամ կասեցման ակտի ձևակերպման միջոցով:

9.3 Սույն Հուշագիրը կազմված է 4 օրինակից՝ երկուական ռուսերեն և հայերեն լեզուներով, որոնք ունեն հավասարազոր իրավական ուժ:

Կողմերի իրավական հասցեները

Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամ ՌԴ, Մոսկվա, 119991, Լենինյան պողոտա 32/ա	ՀՀ Գիտության պետական կոմիտե ՀՀ, Երեւան,375010, Գլխավոր պ., Կառավարական տուն,3

Կողմերի ստորագրությունները

Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կողմից	ՀՀ Գիտության պետական կոմիտեի կողմից
ՀՀՌՀ խորհրդի նախագահ՝	ՀՀ ԳՊԿ նախագահ ՝
_____Խոմիչ Վ. Յու .	_____Հարությունյան Ս.Գ.